

ԵՐԿՆԱՅԻՆ ՂՕՂԱՆՔ

Գրեց՝ Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Ա.

Ծիրանի փողը ձեռքիս,
Ճամբուն եզերք նստելի.
Պարզած լոյսի պէս հողիս,
Անցորդներուն բաշխելի:

Ու սըրինգէս ծորէին,
Մեղեղներ հայրենի,
Հատիկ, հատիկ սրտազին,
Հատիկ նըման արցունքի:

Մեր հոռովելն հոլովէր,
Արտերու մէջ հասկաթուռ.
Գիւղի աղջիկը ժպտէր,
Ինչպէս համբոյր առ համբոյր:

Դըլէ եաման, քամին դար,
Մեր սարերէն երգաւէտ,
Եւ Հայաստանը ցնծար
Կոմիտասի սրտին հետ:

Բ.

Իմ սիրտս է նըման ցամքած աղբիւրի,
Հազար խաղ կանչեն նոր վարդ չի բացուիր.
Այնտեղ ուր վիշտ կայ՝ հոն սիրտը կ'այրի.
Իմ սիրտս է նըման ցամքած աղբիւրի:

Կանչէ սէր, կանչէ որ հըրաշք ըլլայ,
Ու թուխ՝ ամպերէն բացուի արեգակ.
Լորիկ ջան, լորիկ, վէրք կայ թեւիդ տակ,
Պատեմ ծաղիկով որ շուտով լաւնայ:

Անցայ Արագածն, անցայ ես Սեւան,
Ողի մը տեսայ, լոյս կար իր վըրան,
Հօտա՞ղ էր արդեօք՝ թէ մաճկալ յողնած,
Ըսին Կոմիտասն է հովերու ձայնն:

Իր երգն աղօթք էր, դաշտի օրհնութիւն,
Ակօսն էր բացուած, ցորենով լեցուն.
Քաշէ՛ հողի ջան, գութան չէ, շող է,
Իր երգն աղօթք էր, դաշտի օրհնութիւն:

Կ'ըսեն՝ ծաղիկներն երգով կը բացուին,
Գոյն կու տայ արփին եւ լուսընկան՝ փայլ.
Հազար երանի Հայոց աշխարհին,
Որուն ափսոսներն երգով կը բացուին:

Գ.

Ես արտերն ելայ, արդէն լուսած էր,
Կը հնչէր կոչնակն ու ժամը բաց էր.
Խաչ դըրի սրտիս, աչքերուս սուրբ եղ,
Սուրբ Սուրբը կ'երգէր Կոմիտասն այնտեղ:

Լուռ էին դաշտեր, սարեր ու ձորեր,
Հայաստանն ամբողջ նոր աղօթք ունէր.
Ու կըրակ ինկաւ կարծես երկինքէն
Եւ երգերն եղան նշխար հըրեղէն:

Կրկնեցին Սուրբ Սուրբն, յաւէտ կրկնեցին,
Ինչպէս հրեշտակներ որ երգով կ'ապրին.
Ամէն մէկ հայու սրտին մէջ հիմա՝
Երկինքէն իջած Շարական մը կայ:

Դի'ր խաչածեւ ձեռքդ աչքիս որ պաշեմ,
Սուրբ են քու մատներդ, սրտով կ'աղաչեմ.
Դուն երգով, տաղով մեզ համար լացիր,
Մեր տենչերն երգող դաշնամուր ըրիր:

Ուղեկանէն ասդին, ուղեկանէն անդին,
Նոյն Կոմիտասն է դէմքով լուսեղէն,
Նա մեր կը ընունին է հաղար կարօտի,
Թղթիկ մ'ալ են տամ որ մեր տուն տանի:

Դ.

Կը լըսէ՞ք երգերն անտառներուն մեր,
Հովերն երգեհոն, ծառերն ստեղնաշար.
Կը բարձրանան վեր ու կ'իջնեն ձեռքեր
Ձեռքեր ստեղծող սիրով լի աշխարհ:

Թէ կ'ուզէք հըրաշք՝ դացէք Հայաստան,
Երգով կը ստեղծեն եւ արուեստ եւ լոյս,
Հողեղէն մարդիկ անմահ կը դառնան,
Ուր սէրն է քերթուած եւ սիրտն երգահան:

Եւ մէկը կայ հոն, ոչ ոքի նըման,
Եւ աներեւոյթ եւ երեւելի.
Դուռ ու տանիք է, լոյսի պատուհան
Եւ ճամբու ընկեր ամէն պանդուխտի:

Ինձ համար չինեց, չինեց քեզ համար,
Հաւաչի բոյրով երգեր տընային.
Հարսին քօղ ըրին վանկերն՝ ոսկեծայր,
Ու փեսան կապեց ծիրանի դօտին:

Կը լըսէ՞ք կարկաջն աղբիւրներուն մեր,
Սարերու հովերն, աղջիկներու ձայնն.
Ձեռքեր կը շարժին, մեղմօրօր ձեռքեր
Երգի կը փոխուի ամբողջ Հայաստանն:

Ե.

Ինձ մի՛ խօսիք մահուան մասին,
Դադադրին մէջ ես դայն տեսայ՝.
Անմահութիւնն էր երեսին
Ձերդ ծիածան եւ բազն ոսկեայ:

1. Աղնարկ այցելութեան, երբ Վիլ Ժուլի մեռած կը հանդէսէր:
Տե՛ս «Բաղմալէպ» 1936, Յունուար, էջ 5:

Խաչով ճակատն համբուրեցի,
Ինչպէս լքուած հին սրբավայր.
Ի՞նչ վատ է մարդ պանդուխտ մեռնի,
Անձանօթին հետ հաւասար:

Սիրտն էր ինչպէս փլած տըներ,
Ո՞վ պիտի տար սիւն ու տանիք.
Ինքն ալ հայու լաճ տընաւեր,
Կ'երազէր հող ու հայրենիք:

Եկան հաւքեր թեւեր տըլին,
Եկան հովերը շունչ տըլին,
Բացին ծովերը ճանապարհ,
Խունկով օծեց եկեղեցին:

Մեր մէջն հիմա կը կրկնուի,
Հաղար կ'ըլլայ, միլիոն կ'ըլլայ.
Ճերմակ հացի պէս կը ծամուի,
Ուր որ հարսնիք կամ աղօթք կայ:

Նա մեր հողն է, երկինքը մեր,
Լոյսի քայլերդն առաւօտեան,
Տօթին դիմաց ծառ զովարեր,
Տունի ճամբայ երեկոյեան:

Ջ.

Մաղ մաղ կ'անձրեւէ, մեռնիմ մեր հողին,
Մեռնիմ ես դոյն դոյն վարդ ըստեղծողին.
Երկինքն անոյշ է կողմն արեւելեան
Անձրեւէն յետոյ կ'ելլէ ծիածան:

Թող ծաղիկ բուսնի սարերու վըրան,
Թող աղբիւր ելլէ, դաշտեր կանաչնան,
Ոտքերուդ տակ դորդ, ոտքերուդ տակ վարդ,
Քալես Կոմիտաս տանըդ մէջ զըւարթ:

Քիչ է որ ձօնենք սիրտ ու հայրենիք,
Քիչ է որ աղօթքն ըլլայ քեզ տանիք.
Դու մերն ես յաւէտ եւ պատիւ եւ փառք,
Ամբողջ Հայութեան երանելի վարդ: